ՅՕԲԵԼԵԱՆ

յօբելեանական յանձնաժողովի հանգանակութեան գանձանակին։

Բժշկապետ Ա. Բաբայեան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԸ ՍԱՄԱՐՂԱՆԴՈՒՄ

—

Սամարղանդ, 23 սեպտեմբերի

Երէկ, ամսոյս 22-ին, կէսօրէից յետոյ ժամը 1-ին, հայոց ուսումնարանի շէնքում կատարուեց խորհրդակցութիւն և հանդէս համազգային մեծ յօբելեանի։ Հանդէսը բացուեց «Հայր մերով»։ Լաւ տպաւորութիւն թողեցին քառաձայն երգերը պ. Սագինեանի ղեկավարութեամբ։ Հայր Սարգսեանը և ուս. պ. Զաքարեանը արտասանեցին պատշաճ բովանդակութեամբ բանախօսութիւններ։

Հանդէսը «Հայր մերով» փակուելուց յետոյ, հայր Սարգսեանը դարձաւ հանդիսականներին, յայտնելով որ հայկական տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեակները յաւերժացնելու համար հիմնւում է դպրոցական ֆոնդ, որի համար էլ Վեհ. Կաթողիկոսից ստացված է ժապաւենեալ մատեան նուիրատուութիւններն արձանագրելու։

Հանգանակութեան արդիւնքը ցոյց կը տայ, թէ Սամարղանդի հայ գաղութը որքան արժանի է հայ կոչուելու։

Հայութեան ազգային և բարոյական նկարագիրը չափելու մի լաւ աստիճանաչափ է այդ հանգանակութիւնը։

Ա. Ց. Մուրադեան